

Քիլիսէէ եկած ճանապարհէն, որ կգայ Ժաղկոտն գաւառով, Արածանւոյ ձախ եզրն ի վայր Տամբադ. ուստի 1 ¹/₂ ժամէ Շորվերան, 1 ժամէ Պորձի-Մասուր. 1 ¹/₂ ժամէ Խամուր, որ կայ 1 ժամ յարեւելս Արածանւոյ:

Խամուրէ նոյն ուղղութեամբ արեւմտեան հարաւ Խամուրայ ձորն ի վեր 3 ¹/₂ ժամ շարունակելով ևս սուր սուր բլրակներու միջով ներքին Անդաբ գաւառակի առաջին Ղասոյի գիւղն, որ 1 ¹/₂ ժամէ Արածանւոյ հեռի, ուստի 1 ժամ Փալաթդան. 1 ժամ Մուսիկ, ուստի Քոշկ, ուր կայ հին շինուածներ, աւերակ բերդօրայք ևն. յորմէ 1 ժամէ Խրպասօր, որ 3 ժամ բարձր է յԱրածանւոյ, Մըլլա հասան 1 ժամ:

Անգար վերջացած է. ¹/₂ ժամէն կանցնենք Մանազկերտի առաջին գիւղն Հաճի Բօդի, ¹/₂ ժամ Ալեար որ և Շէյխ Ատըլի գիւղ Արածանւոյ եզրը. ուստի Հասնանցի Սոֆի աղայի անտառավայրն Սըլէման Տօեակ, ուստի Շէյխ ճօռա, որ քրդաց ուխտավայրն է ¹/₂ ժամէն և ¹/₂ ժամ ևս գետէն հեռի, Հասունան որ է Բայրամ բէկի գիւղն: Սա է Բանդքի բէկերու ցեղից:

Այս տեղ կանցնի Սարակօղիւր անուն մեծ ջուրն որ Բաղնոցայ ջրի կըմիանայ և վերան Բրէ Մասեան կամուրջը կայ:

Խարապա Պատիշվան 1 ժամ և ¹/₂ ժ. Արածանւոյ, ուստի կանցնինք Պատիշանայ ջուրն, որ Բաղնոցի կողմէն կգայ. կը մաննենք ¹/₂ ժամէն Մանազկերտ բերդ. որ Արածանւոյ ձախ ափէն ¹/₄ ժամ հեռի է:

Բերդի ¹/₄ ժամ հարաւէն կանցնի Սնճանայ ջուրն և Արածանի կը թափի:

Այս ջուրն Սիփանայ գլխից կիջնայ, գետնի տակից 4 ժամ գալով Սնճանայ Ակներ գիւղի մօտ, ուր է